ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<----->> **փետրվարի 2012թ.** **N—— -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հաշվի առնելով <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՓԲԸ-ի 18.01.2012թ. հ.20/2-Ե-1 գրությունը և Վաղինակ Անանյանի դիմումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝

տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 6-րդ գոտում գտնվող և սեփականության իրավունքով Վաղինակ Անանյանին պատկանող Երևանի Կուրղինյան փողոցի հ.27/17 հասցեի 901.66քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.12.2011թ. հ.2715344 վկայական), տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 7-րդ գոտում Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.51/2 հասցեում գտնվող 1174.46քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է քաղաքացի Վաղինակ Անանյանին Կուրղինյան փողոցի հ.27/17 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակել Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.51/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ:

Սեփականության իրավունքով Վաղինակ Անանյանին Կուրղինյան փողոցի հ.27/17 հասցեում պատկանում է 901.66քմ մակերեսով հողամաս, որում բնակելի տան կառուցման նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար վերջինս 2011 թվականի դեկտեմբերի 6-ին դիմել է Երևանի քաղաքապետարան: Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ հողամասը գտնվում է նախագծային ճանապարհի համար առանձնացված հողամասի սահմաններում, որտեղ նման քաղաքաշինական գործունեություն ծավալելը, ելնելով Երևան համայնքի շահերից, նպատակահարմար չէ:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Վաղինակ Անանյանին առաջարկվել է Կուրղինյան փողոցի հ.27/17 հասցեում սեփականության իրավունքով իրեն պատկանող և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 6-րդ գոտում գտնվող 901.66քմ մակերեսով հողամասը փոխանակել Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.51/2 հասցեում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 7-րդ գոտում գտնվող 1174.46քմ մակերեսով հողամասի հետ:

Նկատի ունենալով, որ սեփականության իրավունքով Վաղինակ Անանյանին պատկանող Կուրղինյան փողոցի հ.27/17 հասցեի 901.66քմ մակերեսով հողամասի կադաստրային արժեքը ավելի բարձր է և կազմում է 6.275.553 ՀՀ դրամ, իսկ համայնքային սեփականության հանդիսացող Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.51/2 հասցեի առաջարկվող 1174.46քմ մակերեսով հողամասինը 5.313.257 ՀՀ դրամ է, Վաղինակ Անանյանը 08.12.2011թ.-ին ներկայացրել է գրավոր համաձայնություն՝ հողամասերի փոխանակման համար:

Քննարկվող հողամասերը համապատասխանում են ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Որոշման ընդունման արդյունքում Երևան համայնքը հնարավորություն կունենա իրականացնել քաղաքաշինական ծրագրերը նախատեսված վայրերում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ